



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ	1
2. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	5
3. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	7
4. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	10
5. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ.....	11
6. ԱՄՓՈՓՓՈՒՄ	11

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ

2018 թվականին տնտեսության զարգացումն ընթացել է նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով: 2018-ը սկսվել է ՀՆԱ-ի իրական աճի բարձր տեմպերով՝ առաջին եռամսյակում կազմելով 9.8% (2017-ի առաջին եռամսյակի աճը՝ 7.2%), սակայն հետագա ամիսներին տնտեսական աճի տեմպը աստիճանաբար նվազել է, և 2018թ. հունվար-դեկտեմբերի տնտեսական աճը կազմել է 5.2%, ինչը 2017թ. ցուցանիշից 2.3 տոկոսային կետով ցածր է:

2018թ. տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների 9.3 տոկոս (նպաստումը՝ 4.6 տոկոսային կետ), արդյունաբերության 5.8 տոկոս (նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ) և շինարարության 0.8 տոկոս (նպաստումը՝ 0.1 տոկոսային կետ) աճով: Ընդ որում, ծառայությունների կազմում աճին առավելապես նպաստել են մշակույթի, զվարճությունների և հանգստի (1.4 տոկոսային կետ), ինչպես նաև առևտրի (1.0 տոկոսային կետ) ճյուղերում ավելացված արժեքի աճերը: Արդյունաբերության ոլորտի կառուցվածքում տնտեսական աճին նպաստել է մշակող արդյունաբերությունը՝ 1.2 տոկոսային կետով, իսկ հանքագործական արդյունաբերությունն ունեցել է բացասական նպաստում՝ -0.5 տոկոսային կետով:

2017-ի նկատմամբ, 2018-ին տնտեսական աճի դանդաղումը պայմանավորված է ծառայությունների և արդյունաբերության ոլորտներում աճերի դանդաղմամբ (համապատասխանաբար 10.6-ից 9.3 և 11.8-ից 5.8): Ընդ որում, համեմատության մեջ ամենաարագ աճող ճյուղի՝ ծառայությունների կառուցվածքն ավելի է վատթարացել, քանի որ ավելի է մեծացել խաղային ծառայությունների ծավալը, որոնք հիմնված են ներքին պահանջարկի վրա և հավելյալ արդյունք չեն ստեղծում: Այսպես՝ ծառայությունների կառուցվածքում «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի աճն արագացել է 19.5 տոկոսային կետով, մինչդեռ առևտրի աճը դանդաղել է 11 տոկոսային կետով, «առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» ենթաճյուղի աճը դանդաղել է 6.8 տոկոսային կետով, իսկ «պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն» ենթաճյուղի աճը դանդաղել է 11.8 տոկոսային կետով: Արդյունքում՝ ծառայությունների կազմում «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի կշիռն աճել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 10.7 տոկոս:

Աղյուսակ 1. Համախառն ներքին արդյունք, 2017-2018թթ.

		2017			2018		
		մլրդ ՀՀ դրամ	Իրական աճի ինդեքս	Իրական աճին նպաստում	մլրդ ՀՀ դրամ	Իրական աճի ինդեքս	Իրական աճին նպաստում
	ՀՆԱ	5564.5	107.5	7.5	6005.1	105.2	5.2
	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	572.1	109.7	1.0	639.1	108.0	0.8
	Ֆինանս. միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ (ՖՄԱԶՇ)	-102.9	104.5	-0.1	-116.7	110.8	-0.2
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	834.4	94.9	-0.8	822.4	91.5	-1.3
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	185.5	125.7	0.7	173.2	85.8	-0.5
C	Մշակող արդյունաբերություն	591.6	111.8	1.2	679.0	111.1	1.2
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	226.8	103.8	0.2	220.9	109.2	0.4
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	27.8	110.1	0.0	29.3	99.2	0.0
F	Շինարարություն	404.4	102.8	0.2	397.8	100.8	0.1
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	615.0	120.5	2.0	681.2	109.5	1.0
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	169.4	114.2	0.4	194.0	111.4	0.3
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	78.2	124.9	0.3	109.5	135.6	0.5
J	Տեղեկատվություն և կապ	185.6	104.8	0.2	193.7	104.5	0.1
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	272.8	118.5	0.8	319.5	117.8	0.9
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	436.5	99.9	0.0	476.3	103.5	0.3
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	60.5	98.9	0.0	69.3	114.8	0.2
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	50.4	111.5	0.1	57.8	111.1	0.1
O	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն	262.8	103.0	0.1	252.5	91.2	-0.4
P	Կրթություն	151.1	97.3	-0.1	153.6	100.4	0.0
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	231.3	111.5	0.5	254.5	104.7	0.2
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	256.3	112.0	0.5	339.4	131.5	1.4
S	Սպասարկման այլ ծառայություններ	52.2	142.0	0.3	55.7	106.0	0.1
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	2.9	99.6	0.0	2.9	98.8	0.0

2018 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 1.8%, իսկ միջին գնաճը՝ 2.5%: Տնտեսական զարգացումներից ելնելով՝ ՀՀ ԿԲ-ը չի փոփոխել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (6%) և պահպանել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությունը: Ըստ ԿԲ-ի՝ նույն տոկոսադրույքի պահպանումը համարվում է խթանող, քանի որ այն ավելի ցածր է միջազգային ֆինանսական շուկաների և ՀՀ ֆինանսական հատվածի զարգացումներին համապատասխան հավասարակշիռ տոկոսադրույքից:

Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել, իսկ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2018 թվականին շարունակել են աճել: Ընդ որում, ընդհանուր

վարկերի աճը հիմնականում ապահովվել են սպառողական և հիփոթեքային վարկերի աճով, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել ընթացիկ տարվա տնտեսական աճի վրա, սակայն չեն նպաստել երկարաժամկետ տնտեսական աճին: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ աճող վարկերը ապագայում պետք է վերադարձվեն, ինչը ներկայիս եկամուտների (աշխատավարձ, տրանսֆերտներ) ցածր աճի պարագայում նույնպես մտահոգիչ է՝ ֆինանսական և մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:

2018 թվականին հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղությունը պահպանվել է: Արդյունքում պետական բյուջեի պակասուրդը նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 1.8%-ը՝ ծրագրված 2.7%-ի փոխարեն: Նվազել է նաև ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 51.4%:

Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը՝ հարկաբյուջետային ազդակը, 2018 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գնահատվել է 2.3 զսպող՝ պայմանավորված և՛ ծախսերի, և՛ եկամուտների զսպող ազդեցություններով: Հարկ է նշել, որ պետական բյուջեի սպասվածից ավելի զսպող լինելը բացասական հետևանքներ է ունենում տնտեսության վրա: Նման հարկաբյուջետային քաղաքականությունը զսպում է ամբողջական պահանջարկը, հետևաբար նվազում են նաև արտադրության ծավալները՝ նվազեցնելով ամբողջական եկամուտները: 2018թ. իրավիճակը փոքր-ինչ շտկվել է ԿԲ-ի կողմից իրականացվող խթանող քաղաքականությամբ: Կենտրոնական բանկը չի փոխել տոկոսադրույքը, սակայն բաց շուկայական գործառնությունների (կարճաժամկետ ռեպոյի) մեծ քանակով որոշ չափով լրացրել է պետական բյուջեի կողմից առաջացրած իրացվելիության պակասը: Այդուհանդերձ, պետք է հաշվի առնել, որ ԿԲ-ի կողմից տրամադրված իրացվելիությունը տնտեսության իրական հատվածին հասնում է վարկերի տեսքով, որոնք պետք է հետագայում վերադարձվեն, մինչդեռ պետական բյուջեի ծախսերը վերադարձման ենթակա չեն: Հետևաբար, պետական բյուջեի թերակատարման փոխհատուցումը դրամավարկային քաղաքականության միջոցով խիստ կարճաժամկետ է, և նման իրավիճակի երկարաժամկետ պահպանումը բավական վտանգավոր հետևանքներ կարող է առաջացնել:

2018 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է գործազրկության մակարդակի նվազմամբ և միջին ամսական աշխատավարձի աճով:

Գործազրկության մակարդակը 2018 թվականին կազմել է 16.3%՝ 1.5 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նկատմամբ: Զբաղվածների թվաքանակն աճել է 6.1%-ով՝ կազմելով 1073.8 հազար մարդ, նախորդ տարվա

1011.7 հազար մարդու դիմաց, իսկ գործազուրկների թվաքանակը՝ կրճատվել 4.8%-ով՝ կազմելով 208.4 հազար մարդ՝ նախորդ տարվա 219 հազարի դիմաց¹:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից նոր մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակը 2018 թվականին կազմել է 20.4%՝ 0.4 տոկոսային կետով նվազելով նախորդ տարվա նկատմամբ²: Նոր մեթոդաբանությամբ հաշվարկված զբաղվածների թվաքանակը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.4%-ով՝ կազմելով 915.5 հազար մարդ, իսկ գործազուրկների թիվը կրճատվել է 1.1%-ով՝ կազմելով 234.0 հազար մարդ:

2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.0%-ով՝ կազմելով 172,727 ՀՀ դրամ, իսկ իրական աշխատավարձն աճել է 1.5%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 2.9%-ով՝ կազմելով 149,188 ՀՀ դրամ, իսկ մասնավոր հատվածում աճել է 3.7%-ով՝ կազմելով 186,254 ՀՀ դրամ³:

2018 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ կտրուկ խորացել է՝ ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 9.1% և գրեթե եռակի շեղվելով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակից⁴: Ընթացիկ հաշվի խորացումը պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև դրամական փոխանցումների նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 7.8%-ով՝ կազմելով 2411.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 21.1%-ով՝ կազմելով 4963.2 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման աճ է արձանագրվել գրեթե բոլոր ապրանքախմբերով՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ, ներքին պահանջարկով, ինչպես նաև պաշարների կուտակմամբ: Ներմուծման 21.1% աճի 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է ներդրումային բնույթի՝ «մեքենաներ,

¹ Տվյալների աղբյուրը ՀՀ ՎԿ-ի կողմից կատարվող՝ աշխատուժի հետազոտությունն է:

² Նոր մեթոդաբանությամբ զբաղվածությունը համարվում է աշխատանքի հինգ ձևերից միակը, որն իրականացվում է այլոց համար՝ վարձատրության կամ եկամտի դիմաց: Նախկին սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթվա ընթացքում իրենց տնտեսությունում զբաղվել են ապրանքների արտադրությամբ՝ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ: (Նոր մեթոդաբանությունն առավել մանրամասն տե՛ս ՀՀ ՎԿ կայքում՝ http://armstat.am/file/article/sv_06_18a_141.pdf):

³ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների տվյալներով:

⁴ ՀՀ ՖՆ գնահատականներով այդ երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակը կազմում է 3-4%:

սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբով: Ներմուծման աճին նշանակալիորեն նպաստել են նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 2.8 և 1.8 տոկոսային կետերով):

2018 թվականին արտահանման աճը կազմել է 7.8%, ինչը մոտ 17.1 տոկոսային կետով ավելի ցածր է, քան 2017թ. աճը (24.9%): ՀՀ տնտեսության համար առանցքային նշանակություն ունի արտահանելի հատվածի զարգացումը, որը հիմնված կլինի արտաքին պահանջարկի վրա: Հետևաբար, արտահանման աճի նման կտրուկ դանդաղումը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մակրոտնտեսական ճիշտ քաղաքականության իրականացման միջոցով ռեսուրսներն ուղղել արտահանելի հատված: Այլապես՝ ներկա պատկերը մտահոգիչ է երկարաժամկետ կայուն աճի ապահովման տեսանկյունից:

2018 թվականի արտահանման 7.8% աճը հիմնականում պայմանավորվել է արտաքին պահանջարկի աճով: Արտահանման աճին ամենամեծ դրական նպաստումն է ունեցել «մանածագործական իրեր» ապրանքախումբը՝ 4 տոկոսային կետով: Աճին դրական են նպաստել նաև «բուսական ծագման արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը (համապատասխանաբար՝ 1.4, 1.3 և 1.2 տոկոսային կետերով):

Տնտեսությունն ներհոսող դրամական փոխանցումները 2018 թվականին նվազել են 0.9%-ով և կազմել 1118.5 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված ռուսական ռուբլու արժեզրկմամբ:

2. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.4%-ը՝ նախորդ տարվա 22.2%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ՀՆԱ-ի 21%-ը՝ նախորդ տարվա 20.8%-ի դիմաց՝ բարելավվելով ընդամենը 0.2 տոկոսային կետով:

2018 թվականի ընթացքում հարկային միասնական հաշվին կատարված վճարումների հանրագումարը 48.1 մլրդ դրամով գերազանցել է հարկային հաշվարկների հիման վրա միասնական հաշվից կատարված մարումների հանրագումարը, և, որպես հետևանք, տարեվերջին միասնական հաշիվն այդ գումարի չափով ունեցել է մնացորդ: Վերլուծությունների ընթացքում հաճախ վերոհիշյալ 48.1 մլրդ դրամը գումարվում է 2018թ. հարկային եկամուտներին և հաշվի է առնվում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշում՝ արդյունքը դիտարկելով որպես բարելավում: Նշենք, որ թեև միասնական հաշվի մնացորդը

նույնպես հանդիսանում է տնտեսությունից հավաքագրված դրամական միջոց, սակայն դա հարկային եկամուտ չէ և չի կարող ծախսվել, հետևաբար չի կարող նաև հաշվի առնվել հարկեր/ՀՆԱ-ի հաշվարկման ժամանակ: Այսինքն՝ հարկեր/ՀՆԱ-ի բարելավում կարող է համարվել միայն վերոհիշյալ 0.2 տոկոսային կետը:

Հաշվի առնելով այն հայտարարությունները, որ ՀՀ տնտեսությունում կա մեծ չափով ստվերային մաս և 2018թ. տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո այն պետք է կտրուկ կրճատվեր, ապա հարկեր/ՀՆԱ-ի այս չափով բարելավումը, մեղմ գնահատմամբ՝ բավական համեստ ցուցանիշ է: Նշենք, որ ըստ առանձին հարկատեսակների պետական բյուջեի մուտքերը համադրելի չեն նախորդ տարվա մուտքերի հետ, ուստի դրանց համեմատությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների նկատմամբ բյուջեի կատարման հաշվետվությունում չի ներկայացվել:

Աղյուսակ 2. 2018 թվականի պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	Տարեկան պլան ⁵	Տարեկան ճշտված պլան ⁶	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,308.3	1,365.3	1,341.7	98.3%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,248.5	1,262.1	1,258.1	99.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	35.8	38.6	11.2	29.1%
Այլ եկամուտներ	24.0	64.7	72.3	111.8%

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջեի մասին օրենքով, ելնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող զարգացումներից, ինչպես նաև օրենսդրության փոփոխություններից և վարչարարական միջոցառումներից ակնկալվող մուտքերից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1,308.3 մլրդ դրամ եկամուտ, որից 1,272.5 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 35.8 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով:

⁵ Հաստատված է «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

⁶ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

2018 թվականի փաստացի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1341.7 մլրդ դրամ (կատարողականը՝ 98.3%), այդ թվում հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ 1258.1 մլրդ դրամ (կատարողականը՝ 99.7%):

2018 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են ավելի քան 11.2 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 29.1%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 27.4 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է ծրագրային ցուցանիշի ընդամենը 35%-ը:

2018 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 72.3 մլրդ դրամ այլ եկամուտներ, որոնք 11.8%-ով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերի գերազանցմամբ:

3. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2.9 տոկոսային կետով, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.1 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կշիռը՝ 1.7 տոկոսային կետով: 2018 թվականին պետական բյուջեի ընդամենը ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 24.1%-ը, որից ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 21.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 2.5%-ը:

2018 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,447.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 3.8%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են շուրջ 1,299 մլրդ դրամ (կատարողականը ճշտված պլանի նկատմամբ՝ 97.1%)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.5%-ով⁷: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (կապիտալ ծախսերը) կազմել են 148.1 մլրդ դրամ

⁷ Պետք է նկատի ունենալ, որ 2017 թվականի ծախսերի մեջ ներառված է եղել ԱԱՀ վերադարձի 16.6 մլրդ դրամ գումարը, իսկ 2018 թվականի վերադարձն ամբողջությամբ տեղի է ունենում հարկային եկամուտներից: Սա հաշվի առնելով՝ 2018 թվականին ընդամենը ծախսերի նվազումը կկազմի շուրջ 2.8%, իսկ ընթացիկ ծախսերի աճը՝ 3.9%:

(կատարողականը ճշտված պլանի նկատմամբ՝ 78.0%)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 37.6%-ով:

**Աղյուսակ 3. 2018 թվականի պետական բյուջեի ծախսերը
(գործառնական դասակարգմամբ), մլրդ դրամ**

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,465.2	1,527.3	1,447.1	94.7%
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	278.7	285.4	278.5	97.6%
Պաշտպանություն	247.9	247.6	238.5	96.3%
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	102.6	127.5	123.1	96.6%
Տնտեսական հարաբերություններ	133.6	135.8	112.2	82.6%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	11.6	10.7	5.7	53.1%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	18.8	25.0	11.7	46.9%
Առողջապահություն	84.1	83.3	79.6	95.6%
Հանգիստ, մշակույթ և կրոն	27.0	26.0	25.3	97.3%
Կրթություն	127.2	124.6	121.6	97.6%
Սոցիալական պաշտպանություն	408.7	424.4	416.6	98.2%
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	25.1	37.1	34.3	92.4%

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից 278.5 մլրդ դրամ տրամադրվել է *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների* (պետական կառավարման մարմինների պահպանման գծով, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների, արտաքին հարաբերությունների, պետական պարտքի գծով գործառնությունների և այլ) ծախսերին՝ ապահովելով ծրագրի 97.6%

կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի, հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման, ինչպես նաև համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի կատարողականով:

2018 թվականին *պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 238.5 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 96.3%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի անձնակազմի նյութական խրախուսման ծախսերի ցածր կատարողականով: Բացի այդ, ճշտված պլանի թերակատարումը պայմանավորված է նաև Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ծրագրի շրջանակներում նախատեսված 3.3 մլրդ դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նշված թերակատարման արդյունքում նախորդ տարվա համեմատ պաշտպանության ոլորտի ծախսերում արձանագրվել է 19%-ով (56 մլրդ դրամով) անկում: Սակայն նշված ծրագրերի թերակատարման պատճառների վերաբերյալ որևէ բացատրություն բյուջեի հաշվետվությունում չի նշվում՝ այն դեպքում, երբ 2018 թվականին վարչապետն իր պաշտոնավարման ընթացքում բազմիցս հայտարարել է երկրի պաշտպանության, սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման կարևորության մասին:

2018 թվականին *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.7 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 53.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Սակայն, դրա հետ մեկտեղ, նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ծախսերն աճել են 5.3%-ով կամ 284.2 մլն դրամով:

2018 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 11.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 46.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման և փողոցների լուսավորման ոլորտներում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև բնակարանաշինության խմբի ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 7.1%-ով կամ 901.5 մլն դրամով նվազել են նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում պայմանավորված ջրամատակարարման ոլորտի արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Կապիտալ ծախսերի թերակատարումը իրենից լուրջ վտանգներ է ներկայացնում: Եթե ընթացիկ ծախսերը վտանգում են կարճաժամկետ տնտեսական աճը, ապա կապիտալ ծախսերի ցածր մակարդակը, կարող է պերմանենտ նվազեցնել ապագայում տնտեսական աճի տեմպը, քանի որ նվազում է արտադրողականությունը: Իսկ ցածր տնտեսական աճը ՀՀ տնտեսության համար, կարելի է ասել, անթույլատրելի է: Ցածր տնտեսական աճի պայմաններում վտանգի տակ կդրվի ինչպես սոցիալական խնդիրների լուծումը, այնպես էլ ֆինանսական և մակրոտնտեսական կայունության ապահովումը:

4. 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

Զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում պետական բյուջեի պակասուրդը նվազել է: 2018 թվականին այն կազմել է 105.4 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 1.8%-ը)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորված 267 մլրդ դրամի (ՀՆԱ-ի 4.8%-ը) համեմատ: Պակասուրդի ֆինանսավորման 34.2%-ը կատարվել է արտաքին աղբյուրների միջոցների ներգրավմամբ, որով պայմանավորված՝ 2018 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 40.2%՝ նախորդ տարվա 42.5%-ի համեմատ նվազելով 2.3 տոկոսային կետով: Արդյունքում ՀՀ կառավարության ընդհանուր (արտաքին և ներքին) պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 51.4%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.3 տոկոսային կետով:

Աղյուսակ 4. 2018 թվականի պետական բյուջեի պակասուրդը, մլրդ դրամ

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	156.9	161.9	105.4	65.1%
այդ թվում՝				
Ներքին աղբյուրներ	77.0	80.4	69.4	86.3%
Արտաքին աղբյուրներ	79.9	81.6	36.0	44.2%

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեն կատարվել է 105.4 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշի 65.1%-ը: Թերակատարումը հիմնականում պայմանավորված է եկամուտների համեմատ ծախսերի ավելի ցածր կատարողականով: Օգտագործվել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված՝ բյուջեի ազատ միջոցների ընդամենը 65.6%-ը, իսկ արտաքին աղբյուրներից ներգրավվել է նախատեսված վարկային միջոցների 76.7%-ը:

5. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ պետական պարտքը 2018 թվականի վերջի դրությամբ կազմել է 6,922.9 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 55.8%-ը, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 6,372.9 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 51.4%-ը, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը՝ 550.0 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 4.4% ը: 2018 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անվանական արտահայտությամբ աճել է 148.3 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, դա տեղի է ունեցել ՀՀ կառավարության պարտքի աճի հաշվին:

2018 թվականի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 5,532.9 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 44.6%-ը՝ 2017 թվականի 5,494.9 մլն ԱՄՆ դոլարի և 47.8%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 4,982.8 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության պարտավորություններն են, 550 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է ավելի քան 370.9 մլն ԱՄՆ դոլար, որից շուրջ 296.7 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և շուրջ 74.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը արտահանման նկատմամբ կազմել է 7.9%՝ նախորդ տարվա 6.7%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների (2017 և 2018թթ. պետական բյուջեի եկամուտների համադրելի ցուցանիշների) նկատմամբ՝ 12.9%՝ նախորդ տարվա 11.4%-ի դիմաց:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

2018 թվականին տնտեսական աճը կազմել է 5.2 տոկոս, որը 2.3 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարի: Տնտեսական աճը պայմանավորվել է հիմնականում «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի աճով: Ընդ որում՝ ծառայությունների կառուցվածքում այս ենթաճյուղի աճը արագացել է 19.5 տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ տնտեսական աճի կառուցվածքը վատթարացել է: Հարկ է նշել նաև, որ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղը աճում է վիճակախաղերի, վիրտուալ մոլեխաղերի, բուքմեքերական գործունեության, խաղատների գործունեության հաշվին, որոնք փաստացի ամրապնդել են իրենց տեղը՝ որպես տնտեսության աճն ապահովող ոլորտներ:

2018 թվականին արտահանման աճը դանդաղել է մոտ 17.1 տոկոսային կետով՝ կազմելով 7.8%: ՀՀ տնտեսության համար առանցքային նշանակություն ունի արտահանելի հատվածի զարգացումը, որը հիմնված կլինի արտաքին

պահանջարկի վրա: Հետևաբար, արտահանման աճի նման կտրուկ դանդաղումը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է մակրոտնտեսական ճիշտ քաղաքականության իրականացման միջոցով ռեսուրսներն ուղղել արտահանելի հատված: Այլապես՝ ներկա պատկերը մտահոգիչ է երկարաժամկետ կայուն աճի ապահովման տեսանկյունից:

Հարկաբյուջետային քաղաքականությունը եղել է սպասվածից ավելի զսպող, ինչը հանգեցրել է ամբողջական պահանջարկի զսպմանը, որը փոքր-ինչ փոխհատուցվել է դրամավարկային քաղաքականության խթանող ուղղությամբ: Սակայն, պետք է հաշվի առնել, որ ԿԲ-ի կողմից իրացվելիության տրամադրումը տնտեսության իրական հատվածին հասնում է վարկերի տեսքով, որոնք պետք է հետագայում վերադարձվեն, մինչդեռ պետական բյուջեի ծախսերը վերադարձման ենթակա չեն: Հետևաբար, պետական բյուջեի թերակատարման փոխհատուցումը դրամավարկային քաղաքականության միջոցով խիստ կարճաժամկետ է, և նման իրավիճակի պահպանումը երկարաժամկետում բավական վտանգավոր հետևանքներ կարող է առաջացնել:

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել են 0.2 տոկոսային կետով: Հաշվի առնելով այն հայտարարությունները, որ ՀՀ տնտեսությունում կա մեծ չափով ստվերային մաս, և 2018թ. տեղի ունեցած քաղաքական իրադարձություններից հետո այն պետք է կտրուկ կրճատվեր, ապա հարկեր/ՀՆԱ-ի այս չափով բարելավումը, մեղմ գնահատմամբ՝ բավականին համեստ ցուցանիշ է:

Կապիտալ ծախսերի թերակատարումը իրենից լուրջ վտանգներ է ներկայացնում: Եթե ընթացիկ ծախսերը վտանգում են կարճաժամկետ տնտեսական աճը, ապա կապիտալ ծախսերի ցածր մակարդակը, կարող է պերմանենտ նվազեցնել ապագայում տնտեսական աճի տեմպը, քանի որ նվազում է արտադրողականությունը: Իսկ ցածր տնտեսական աճը ՀՀ տնտեսության համար, կարելի է ասել, անթույլատրելի է: Ցածր տնտեսական աճի պայմաններում վտանգի տակ կդրվեն ինչպես սոցիալական խնդիրների լուծումը, այնպես էլ ֆինանսական և մակրոտնտեսական կայունության ապահովումը:

2018 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա նկատմամբ փոքր-ինչ նվազել է պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը հիմնականում պայմանավորված է սպասվածից ավելի քիչ ծրագրային վարկերի ստացմամբ, ինչպես նաև անվանական ՀՆԱ-ի ավելի արագ աճով: Հարկ է նշել նաև, որ կառավարության կողմից որդեգրված պարտքի նվազեցման քաղաքականությունը հիմնված է անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճի (պարտքի աճի նկատմամբ) ապահովման վրա: Սակայն, եթե վարվող քաղաքականության արդյունքում

դանդաղի անվանական ՀՆԱ-ի աճը, ապա պարտքի կայունացումը նույնպես վտանգի տակ կդրվի:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: